

ման է իրողանն օգնական ըլլալ ազգային վաճառականութեան գաղափարն, եւ ի՞նչ մտ ընթերցողաց շահին թելովն քաճարողաց թիւն անձ իւր անունը ծաւան ընդարձակելով աւելի ընդարձակ եւ կարեւոր տեսնողութիւններ պիտի տայ: Մասնաւոր կարող անձնքերք եւ երկրական առջնակարգ թերթերէ շատ աւատ նիւթեր պատրաստուած են, որոցց հետզհետէ լոյս պիտի տեսնեն: Հաղէտն պիտի լաւայն այս վաճառականաց հաղորակցութեան միջոցն ըլլալ եւ այս վաճառմանու այս վաճառատանց եւ միջնավաճառաց կը ծանուցանենք որ խմբագրութիւնը յանձն կ'ստնու թերթին մէջ իրենց գործատանց եւ սննդկաց հասցնելով ծանուցանց քառորդ զոմը, այն է սողին 5 սանդիմով ծանուցանել, որպէս զի այս վաճառատունք զիբար ծանչանս եւ իտարու հետ գործեն: Իմանալէս մեր այս կարգի քաճարողութիւնը եւ ինդրենք որ ծանուցանսն խմբագրութեանս որ նշ կարգի ապրանքներու, որ տեսլ անուտորց վրայ յօղուանմեր կ'ընդման. որպէս զի կարող ըլլանք նիւթերն ընթերցողաց պիտոյցն իմանալ կարգադրել:

**ԻՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ**

**ԳՆԱԳՈՒՄԻ ԵՐԿՐԻՔՆԵՐԻ ԸՌԹՈՒՂԻՆ ՏՐՈՒՄԻՐՈՒԹԵՆ ՏՅՎ ԶԳԵԼՈՒ ԵՂՆԵՆԿԸ**

Հարգելի խմբագրութիւնք ինձմէ կը խնդրէ, որ երբեմն երբեմն Ձեր պատուական ամսաթերթին մէջ ժողովրդական օճով իրաւագիտական խնդիրներու վրայ գրեմ:

Հաճութեամբ յանձն կ'ստնում այս առաջարկութիւնն. վառն զի մեր Տրուութիւնն՝ Հայոց մեծանուն ազգին հետ շատ մը առեւտրական յարաբերութիւններ ունենալուն՝ տարակրտ չունիմ որ այս իրաւագիտական խնդիրներն Ձեր պատուական թերթին ընթերցողացն ոչ միայն հետաքրքրական ըլլան, այլ նաեւ գործնական օգուտ ունենան: Այս անգամ նիւթ կ'ընտրեմ ինձի վաճառքները Տրամաբարութեան Կոմիտէի օրէնքներուն վրայ խօսիլ:

Քատ անգամ փորձով տեսայ որ շատ վաճառականներ պակասաւոր ապրանքներն որքան որքան Կոմիտէն Կոմիտէն եղանակը՝ եւ օրինաց որոշումներն չգիտնալով մեծապէս վնաս կրած են:

Այս մասին օրինական որոշումներն հետեւեալներն են:

1. Գնող մը պարտք ունի տեղէ մը իրեն առաքուած վաճառքը՝ որպէս որ գործքերն կը ներեն, ոչ ոքողաք քննելու: Այնպէս վաճառքը քննելու անհնար է հետեւեալ թիւնն այն է, որ յոյսով

պակասութեան մը համար ալ չի կրնար դժուարութիւն մը հանուիլ:

2. Կոմիտէնքն եւ որ առաքուած ապրանքն Կոմիտէն կամ օրինաց համաձայն է: Եթէ գնողն եւ ծախողն արուելի ապրանքին տեսակին նկատմամբ իրարու հետ միարձան են, հարկ է որ ապրանքն այն որքան ըլլայ. ապա թէ ոչ գնողն իրաւունք կ'ունենայ ապրանքը ծախողին տրամադրութեան սակ ձգելու:

Ընդ հակառակն եթէ որոշ որպիսութիւնն որոշուած չէ երկուքին կողմանէ, վաճառողն թէեւ չի հարկադրի ամենայնու տեսակէն տալու, սակայն պէտք չէ որ ամենավատ տեսակէն տայ, մանաւանդ որ ըստ օրինաց որոշման՝ ապրանքն միջին եւ լաւ տեսակէն պիտի ըլլայ:

Եթէ այս երկու նկատմամբ վաճառքն պակասութիւն մ'ունենայ, այսինքն՝ եթէ որոշուած տեսակն ըստ Կոմիտէն չըլլայ, եւ չորոշուած տեսակն ըստ օրինաց չըլլայ, ծախողն վաճառքը տրամադրութեան սակ ձգելու իրաւունք ունի:

3. Բայց որպէս զի ապրանքն ըստ օրինաց «տրամադրելի» ըլլայ, հարկ է որ գնողն ապրանքը քննելէն ետեւ՝ անմիջապէս գտած պակասութիւններն վաճառողին ծանուցանէ, եւ քայն անոր տրամադրութեան յանձնելն որոշ իմացընէ: Ապրանքը պարզապէս տրամադրութեան սակ ձգելն բաական չէ, հարկ է որ պատճառներն, եւ ապրանքին պակասութիւններն վաճառողին իմացուի: Արդէս զի ապրանքին պակասութիւններն իմացուցած ըլլալուն՝ եւ արամագրութեան սակ ձգելուն ապահով ցուցում ունեցուի, լաւ կ'ըլլար միայն ապահովել՝ ապա Կոմիտէն նմանապէս ծանուցանել:

4. Եթէ գնողն ապրանքն անմիջապէս չքննէ եւ կամ անմիջապէս պակասութիւններն չծանուցանէ, պակասութիւններն դիւրաւ ճանաչելի ըլլալուն՝ վաճառքն ընդունուած կը համարուի:

5. Բայց եթէ պակասութիւններն Կոմիտէն ըլլան, այսինքն անմիջապէս չձանցուի, այլ միայն լաւ քննութեամբ եւ կամ ապրանքը գործածելու ատեն լերեան ելլեն, խնդիրը կը փոխուի: Եթէ ապրանքը գաղտնի պակասութիւններ ունենայ գնողն կրնայ պակասութիւններն ճանաչելէն ետքն ապրանքը տրամադրութեան սակ ձգել: Բայց տրամադրութիւնն որպէս զի ըստ օրինաց ըլլայ, հարկ է որ գնողն գաղտնի պակասութիւններն ճանչնալուն պէս վաճառողին ծանուցանէ եւ վաճառքն անոր տրամադրութեան սակ ձգէ:

<sup>1</sup> Հայերէն յարմար գոյական մը չունենալով՝ ստիպուած ենք «Zur Dispositionsstellung» բառն «արամագրութեան սակ ձգելով» թարգմանել: Գերմաներէն բառը կը նշանակէ՝ առաքուած վաճառքն ինչ եւ ի՞նչ պատճառաւ մը չքննուի: Եւ առաքողին ծանուցանել՝ որ ապրանքն ետ առուել կամ այլապէս կործարութիւն մ'ընէ: ԻՄԻՐ.

6. Ապրանքին գաղտնի պակասութիւններն ապրանքին առաքմանէն սկսեալ վեց ամսուան միջոցին մէջ պիտի ճանչցուի. վասն զի եթէ է վեց ամսե ետեւ յայտնուի՝ իրաւունք չ'ունեցուի ապրանքը վաճառողին տրամադրութեան տակ ձգելու: Ուստի եթէ վաճառական մը՝ իրեն եկած ապրանքը վեց ամսուան միջոցին մէջ չի բանար չի նայիր, պիտու լինի. վաճառողին տրամադրութեան տակ ձգելու իրաւունքը կը կորսընցնէ:

7. Վաճառողին դէմ՝ եթէ մէկն դատ քանակ ուղէ՛ որպէս զի առեւտրական դաշխըն ոչնչացուի ապրանքին մէկ պակասութեան համար, եւ վճարուած գինն ետ դարձուի, պէտք է ամէնէն ուշ ապրանքի առաքմանէն սկսեալ վեց ամսուան միջոցին մէջ բողոքել: Եթէ գնողը առաքանքն ապրանքին գինը չէ վճարած, պէտք է որ վաճառքի առաքմանէն սկսեալ վեց ամսուան միջոցին մէջ վաճառողին իմացընէ ապրանքի պակասութիւնն, որպէս զի եթէ վաճառողն ապրանքին գինը պահանջէ՛ իրաւունք ունենայ պատասխանել, թէ ապրանքը պակասաւոր է եւ այն պատճառաւ անոր տրամադրութեան կը թողու:

8. Սակայն վաճառողն կամ գնողն կրնան դաշխարութեան մը երկարել կամ կարճել սոյն ժամանակամիջոցն: Սովորաբար վաճառազնոյն ցանկին (facture, ֆաքտուր) մէջ այս մասին տեղեկութիւններ կամ վճիռներ կը գրուին. եւ որովհետեւ նոյն վաճառազնոյ ցանկն առանց առարկութեան կամ դժուարութեան ընդունիլն կը նշանակէ թէ գնողն ցանկին մէջ գրուած ամէն վճիռներու հասուն է, մասնաւոր կերպով կը յանձնենք որ գնողն ուղարկուած ցանկն ամենայն մտադրութեամբ կարդայ, եւ վրան դրուած տեղեկութեանց կամ վճռոց իմաստին ճշգրիտ լիափայտէ, եւ եթէ կէտ մը կայ որուն չի հաւանիր, անմիջապէս յայտնի է որոշ բառերով վաճառողին իմարնէ:

9. Եթէ խաբէութիւն մ'եղած է, դաշխարութեան ոչնչացումն եւ ապրանքի գնոյն յետս դարձումը կրնայ պահանջուիլ, նոյն իսկ այն առեւն, երբ ապրանքն անմիջապէս քննուած չէ, եւ առաքմանէն ետեւ վեց ամսէ աւել անցած է:

10. Եթէ գնողն վաճառողին տրամադրութեան տակ ձգէ ապրանքը, իրաւունք չունի նոյնն ետ գարձընելու, մասնաւոր թէ վաճառականական օրինաց համեմատ պարտք ունի առ ժամանակ մի նոյնը պահել:

11. Եթէ ապրանքն փճանալու ընդունակ է եւ յապաղելը փաստաւոր, կրնայ գնողն տրամադրութեան տակ ձգուի ապրանքն հրապարակական ձամբով աճրդի հանել: Եթէ ապրանքն չուկայի կամ պորայի որոշ գին մ'ունի, ապրանքը չի կրնար հրապարակաւ միջնալաճառուի եւ կամ աճուրդ հանելու իշխանութիւն ունեցող պաշտօնէի մը ձեռք ծախել: Կլլ միայն ընթացիկ գնով պիտի ծախուի: Գնողն այս վաճառման պարագաներն ըստ կարի շուտով ապրանքն առաքողին պիտի իմացընէ. եթէ զանց առնէ փաստուն հասուցման կը պարտաւորի:

12. Ապրանքին պակասութեան հիմնական ցոյց մ'ունենալու համար՝ գնողն կրնայ ապրանքն հասցողներու ձեռքը եւ դատաստանական ձամբով ապրանքի փճանկն որոշել: Դաւե վաճառողն ունի սոյն իրաւունքը:

Ասոնք են առաքուած ապրանքներն առաքողին տրամադրութեան տակ ձգելու գլխաւոր օրէնքներն, որ կ'արժեն Աւստրիոյ, Հուսագրիոյ, Պոսնիոյ, Լեքսելովիայի, Գերմանիոյ, Անգղիոյ եւ Գաղղիոյ մէջ:

ՏՐ. ՆՄՄՄԱՌՈՒՆԷՆ ԵՐՈՍՍ  
Փաստաբան Վերնի Աստնի Ի Վերնմա:

**ՅՆՏԵՍԱԿԱՆ**

**ՈՐԵՅԵԼԵԱՆ ԵՐԿՐՈՒՅԻՒՄ ԵՆ ՍԵԼԱՆԻՔ**

Սէլանիքի աւտրիական Ընդհանուր Հիւպատոսարանն իւր 1888ի ապրիլի մէջ հետեւեալ տեղեկութիւնը կու տայ: Սէլանիքի համար 1888 տարւոյ անտեսական ամենակարեւոր դիպրուածն հարկաւ Արեւելեան երկաթուղւոց բացումն էր. բայց պէտք էնք յիշատակել որ այս դիպրուածին, եթէ չքսնեք շաբէն աւելի արժէք տրուցաւ, սակայն եւ այնպէս այնպիսի ակնկալութեանց սկզբնակէտը համարուեցաւ, որոնց իրականացումն գոնեայ հեռաւոր ապագային վերապահուած է: Այն վերաւոր կէտերը, որոնք այս նորակաւոյց երկաթուղւոյ շահուտ գործածութեան առ այժմ արդէնք կըլլան, փուշնք միայն համառօտիս ակնարկել նախ բեռերու համար պահանջուած բարձր կիւնքը, որոնք մով սոյն երկաթուղւոյ բեռանց փոխադրութիւնը ներկայիս գրեթէ բոլորովին կատած է: Այս խնդիրը մտերս կարելի է կարգադրուի, եւ ասով ցամաքի վայելի բեռանց սւղարկի փոխադրութիւնն շտարնել կարելի կ'ըլլայ: Կըսենք, կարելի չ'ըլլա, որովհետեւ վաճառաց շառնուանեալ փոխադրութեան գործադրութեան համար, այս է՝ վաճառաց ներածութեան կամ արտածութեան յաճախութեան համար, հարկաւոր է որ նաեւ ուրիշ կէտ մ'իբրեւ անհրաժեշտ պայմանն զուգընթանայ, որ է՝ երկրի մը վաճառաւոր արտածութեան եւ ասկէ կախեալ ներածութեան աստիճանը: